

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 30.09.2019թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 24 (քսանչորս) անդամից, 19-ը (տասնինը), մեկ անդամ քվեարկել է հեռահար կապի միջոցով (էլեկտրոնային նամակը կցված է արձանագրությանը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Մկրտչյան Արթուր Վազգենի** — Ռազմական ամբիոնի պետ
6. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
7. **Մելքոնյան Հովիկ Մենեքերիմի** -Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝
8. **Հովհաննիսյան Արտաշես Ալեքսանի**– Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ
9. **Քալաջյան Ռաֆֆի Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
10. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
11. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
13. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր

- 14. Մեյիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
- 15. Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
- 16. Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
- 17. Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
- 18. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
- 19. Մարգարյան Արմենուհի Հակոբի-Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն**
- 20. Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռեզումական ամբիոն,  
«Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող

## ՕՐԱԿԱՐԳ

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հաստատման մասին (նոր խմբագրությամբ)

1.2 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի օրինակելի կանոնադրության հաստատման մասին (նոր խմբագրությամբ)

Հաղ. ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտորի ԺՊ՝ Ն. Ավետիսյան

2. 2018թ.-ի հոկտեմբերի 26-27 -ին ՇՊՀ-ում կայացած «Կրթության արդի հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերի տպագրության թույլտվության մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

### 3. Ընթացիկ հարցեր

#### 1. Լսեցին՝

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հաստատման մասին (նոր խմբագրությամբ)

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ֆակուլտետի և ամբիոնի օրինակելի կանոնադրությունների հետ կապված բազմաթիվ առաջարկներ ու դիտարկումներ են ստացվել բուհի տարբեր ստորաբաժանումների կողմից, դրանք մանրակրկիտ քննարկվել են, ընդունվել են այդ առաջարկների զգալի մասը, առաջարկների մի մասը ընդունել չէին կարող, քանի որ դրանք հակասում էին բուհի կանոնադրությանը: Պարոն Սերոբյանը նորից առաջարկեց, եթե կան դիտարկումներ, դրանք ներկայացվեն գիտական խորհրդին:

#### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ ամբիոնի օրինակելի կանոնադրության մեջ նշված է, որ ամբիոնը չորս հազար ժամից պակաս չպետք է ունենա, և իր կողմից բազմիցս հարց է բարձրացվել, որ մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ միավորված ամբիոնը առանձնացնել ըստ մասնագիտությունների, փոփոխություն հնարավոր չէ՞ արդյոք կատարել հիմա:

Հարցին պատասխանեց պարոն Սերոբյանը նշելով, որ նման հարց բարձրացվել է նաև աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ պարոն Մարտիրոսյանի կողմից, սակայն կապված այն փաստի հետ, որ ընդամենը երեք ամսից հավատարմագրման գործընթացում պետք է բուհի կողմից ներկայացվի ինքնավերլուծություն, ուստի այժմ կառուցվածքային փոփոխություն կատարել նշանակում է և՛ ինքնավերլուծություն կատարող խմբին հարվածի տակ դնել, և՛ հավատարմագրման գործընթացը ձախողել, հատկապես, որ հիմա քննարկվում է նաև կրթության մասին նոր օրենքը, որը կարող է բազմաթիվ փոփոխություններ առաջ

բերել, ուստի նպատակահարմար է կառուցվածքային փոփոխությունների գնալ ավելի ուշ, հատկապես, որ ինքը համաձայն է պարոն Սարգսյանի կարծիքի հետ:

**Ս. Սարգսյանը** շարունակեց, որ հնարավոր է հենց հավատարմագրման գործընթացում ստանանք դիտողություն ամբիոնների նման միավորման համար:

**Պարոն Սերոբյանը** նշեց, որ հնարավոր է, սակայն այս պահին կառուցվածքային փոփոխությունների գնալը ռիսկային է, քանի որ այդ գործընթացի շարունակությունը կրեթի ֆակուլտետների կառուցվածքային փոփոխության, այնուհետև դեկանների ընտրության և իր կարծիքով մարտ-ապրիլ ամիսներին կարող են գնալ այդ փոփոխություններին, որպեսզի սեպտեմբերին արդեն ունենան նորմալ կառուցվածք:

**Ս. Սարգսյանը** ևս մեկ հարց ուղղեց, նշելով, որ ըստ կանոնադրության համապատասխան կետի՝ ամբիոնը կարող է անթիվ բազմությամբ ՄԿԾ-ներ իրականացնել, իրականում ամբիոնը քանի՞ ՄԿԾ կարող է իրականացնել:

**Պարոն Սերոբյանը** պատասխանեց, որ նման սահմանափակում ինքը չգիտի, եթե խմբեր ձևավորվում են, ուրեմն հնարավոր է նաև բազմաթիվ ՄԿԾ-ների իրականացումը տվյալ ամբիոնի կողմից:

**Պարոն Ս. Սարգսյանը** չհամաձայնեց պարոն Սերոբյանի ասածի հետ՝ նշելով, որ ըստ իր տեսակետի, ամբիոնը մեկ կամ երկու մասնագիտություն պետք է իրականացնի, լավագույն դեպքում հարակից մասնագիտություններ կարող է իրականացնել:

**Պարոն Սերոբյանը** հարցրեց, այդ դեպքում եթե բակալավրատում ունենք 38-39 մասնագիտություն, ապա 37 ամբիոն՞ է պետք ունենալ և քանի որ խմբերը չեն համալրվում ուսանողներով, արդեն իսկ այս առումով բուհում խնդիր կա:

**Հ. Մելքոնյանը** նշեց, որ իր դիտարկումը կապված է Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության 2.2.2-րդ կետի կետ, ուղղագրական վրիպակ կա, որը տեղում ուղղվեց:

**Պարոն Սերոբյանը** առաջարկեց ամբիոնի օրինակելի կանոնադրության 2.9-րդ կետում ավելացնել ՊԴ բառը, որը ընդունվեց գիտական խորհրդի անդամների կողմից և տեղում ավելացվեց:

**Ա. Սարգսյանը** հարց ուղղեց ամբիոնի օրինակելի կանոնադրության 51 և 52-րդ հարցերի հետ կապված (քվեարկության հետ առնչվող):

**Պարոն Սերոբյանը** պատասխանեց, որ ինքը հոգաբարձուների խորհրդում առաջարկել է, որ բուհի կանոնադրության 102-ից և 110 կետերից դուրս բերվեն «նիստին ներկա» բառերը և հակասությունը դուրս է գալիս:

**Պարոն Սերոբյանը** նշեց, որ այս քննարկումները շատ արդյունավետ են և հարցերը քվեարկության դրեց առանձին- առանձին, արված և ընդունված դիտողություններով հանդերձ.

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1.1 Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

20 անդամ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2 (Ա. Սարգսյան, Վ. Խաչատրյան):

1.2 Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

20 անդամ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2 (Ա. Սարգսյան, Վ. Խաչատրյան):

2018թ.-ի հոկտեմբերի 26-27 -ին ՇՊՀ-ում կայացած «Կրթության արդի հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերի տպագրության թույլտվության մասին

Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանի կողմից ներկայացվեց, որ 2018թ.-ի հոկտեմբերի 26-27 -ին ՇՊՀ-ում կայացած «Կրթության արդի հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերը արդեն գրախոսության են ենթարկվել, կատարվել են սրբագրման աշխատանքները և հրատարակվելու համար անհրաժեշտ է գիտական խորհրդի երաշխավորությունը: Ա. Սարգսյանը նշեց նաև, որ հրատարակման ենթակա աշխատանքների ցանկը նախապես ներկայացվել է գիտական խորհրդի անդամներին՝ էլեկտրոնային նամակի միջոցով և հորդորեց աշխատանքները երաշխավորելու տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2018թ.-ի հոկտեմբերի 26-27-ին ՇՊՀ-ում կայացած «Կրթության արդի հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերը թույլատրել տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

20 անդամ. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ե. Սերոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝  
Արհմիութենական  
կազմակերպության նախագահ՝

Կ. Պետրոսյան

Վ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական  
ֆակուլտետի դեկան՝

Բ. Պողոսյան

Սոցիալական գիտությունների և  
իրավունքի ֆակուլտետի դեկան՝  
Ռեզնակալական ամբիոնի պետ՝  
Ուսումնագիտական  
խորհրդատվական կենտրոն-  
գրադարանի տնօրեն՝

Օ. Հովհաննիսյան

Ա. Սկրտչյան

Արտաքին համագործակցության և  
հասարակայնության հետ կապերի  
կենտրոնի տնօրեն՝

Թ. Խաչատրյան

Ֆինանսատնտեսական  
վերլուծությունների, ծրագրավորման  
և հաշվապահական հաշվառման  
բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝

Հ. Մելքոնյան

Ռ. Քալաջյան

Անձնակազմի կառավարման և  
իրավական ապահովման բաժնի պետ՝

Ա. Հովհաննիսյան

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների  
ամբիոնի պրոֆեսոր՝

Ս. Սարգսյան

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների  
ամբիոնի պրոֆեսոր՝

Հ. Դրմեյան

Անզլերեն լեզվի և գրականության  
ամբիոնի պրոֆեսոր՝

Ա. Հովհաննիսյան

Հայոց լեզվի և գրականության  
ամբիոնի դոցենտ՝

Ս. Հայրապետյան

Մանկավարժության ամբիոնի  
պրոֆեսոր՝

Ռ. Մարդոյան

Հումանիտար գիտությունների և  
արվեստի ֆակուլտետի դեկան՝

Թ. Մելիքյան

Միջմշակութային հաղորդակցության  
և զբոսաշրջության ամբիոնի  
ասիստենտ՝

Շ. Տեր-Աղամյան

Մանկավարժության ամբիոնի  
դոցենտ՝

Լ. Ղուկասյան

Պատմության և փիլիսոփայության  
ամբիոնի դոցենտ՝

Հ. Խորիկյան

Մանկավարժության ամբիոնի  
դոցենտ՝

Լ. Հակոբյան

Գիտական

քաղաքականության, որակի  
ապահովման և կառավարման  
կենտրոնի տնօրեն՝

Ա. Սարգսյան

Աշխարհագրության,  
կենսաբանության և քիմիայի ամբիոնի  
ղոցենտ՝



Լ. Մարտիրոսյան

Բնագիտամաթեմատիկական  
ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 3-  
րդ կուրսի ուսանողուհի

Լ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոն,  
«Նախագորակոչային և ֆիզիկական  
պատրաստություն» 4-րդ կուրսի  
ուսանող՝



Ս. Հարությունյան